ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ԿՀԿ-ԳՀԱՊՁԲ-19/1» ծածկագրով «Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման համար ԳՀ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստ

Ք. Կապան 20.12.2018թ.
Ժամը 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Մինասյան Գայանե
Հանձնաժողովի անդամներ՝ Ալտիկուլանջյան Հրաչիկ
Սարգսյան Լյուդմիլա
Սարգսյան Ալինա
Գնումների համակարգող՝ Մղումյան Ժաննա

<u>ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և մասնակիցների կողմից որակավորման փաստաթղթերի ներկայացման մասին</u>

1. Ընդունել ի գիտություն.

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի պահանջները ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացվել ընտրված մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի <<ՍՅ.ՌՈՒ.ՄԱ>> ՍՊԸ-ն, <<ԿԱՊՄԱՏ>> ՍՊԸ-ն և <<Կարեն Համբարձումյան>> Ա/Ձ-ն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն:

1.1. Հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին տրամադրել է գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը:

1.2. Հանձնաժողովի անդամները գնահատման թերթիկների մեկական օրինակները ներկայացրել են հանձնաժողովի քարտուղարին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0 :

2. <u>Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին</u>

Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել **«ԿՀԿ-ԳՀԱՊՁԲ-19/1»** ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքները.

Մասնակիցների անվանումը	*Հայտի գնահատականը*
<<ՍՅ.ՌՈՒ.ՄԱ>> ՍՊԸ	Բավարար
<<ԿԱՊՄԱՏ>> ՍՊԸ	Բավարար
<<Կարեն Համբարձումյան>> Ա/Ձ	Բավարար

3. «ԿՀԿ-ԳՀԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնումների կատարման նպատակով հայտարարված ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին»ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը՝ **«ԿՀԿ-ԳՀԱՊՁԲ-19/1»** ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակիցներ են հայտարարվում <<ՍՅ.ՌՈՒ.ՄԱ>> ՍՊԸ, <<ԿԱՊՄԱՏ>> ՍՊԸ և <<Կարեն Համբարձումյան>> Ա/Ձ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0 :

4. Գնման պայմանագիր կնքելու որոշման մասին

4.1.Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետը ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Թիվ 31, 32, 33 և 67 չափաբաժինների համար՝ **<<Կապմատ>> ՍՊԸ-ին:**

Թիվ 1, 2, 3, 5, 7, 8, 17, 23, 36, 46, 66 չափաբաժինների համար՝ **Ա/Ձ Կարեն Համբարձումյանին:**

Թիվ 4, 6, 9-16, 18-22, 24-27, 34, 35, 37-45, 47-65, 68 և 69 չափաբաժինների համար՝ **<<ՍՅ.ՌՈՒ.ՄԱ>> ՍՊԸ-ին:**

4.2. Հիմք ընդունելով «Գնումների մասին»ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը, անգործության ժամկետ սահմանել 5 օրացույցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0 :

5 Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

5.1. Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելուն օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 10:00-ին, ՀՀ Սյունիքի մարզ ք. Կապան, Սպանդարյան 4 հասցեում, 201 սենյակ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0 :

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Մինասյան Գայանե

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ալտիկուլանջյան Հրաչիկ

_____ Սարգսյան Լյուդմիլա

_____ Սարգսյան Ալինա

Գնումների համակարգող՝ _____ Մղումյան Ժաննա